ասացին՝ զեկեղեցիսն տուեալ են. և յետոյ լուաք, թէ զայլ եկեղեցիսն տուեալ են, բայց զաւագ եկեղեցին ոչ են տուեալ. և վասն այնորիկ մարդ են առաքեալ առ Պապն։ Եւ մինչ յայսմ տարակուսի էաք՝ ո՛րպէս արդեաք եղեալ իցէ, լուաք զգալուստ դեսպանին, և մնացաք գալստեան նորա. և յորժամ եկն՝ նա եւս զայն ասաց, թէ զայլ եկեղեցիսն տուեալ են, բայց զաւագ եկեղեցին ոչ են տուեալ, և վասն այնր մարդ է գնացեալ առ Պապն։ Նա և ոչ սակաւ յուսադրութիւն ետ մեզ, ասելով, եթէ յորժամ հասանիցեմ առ Թագաւորն՝ դիւրին է այդ. և մեք այնմ դեսպանին՝ որ Պարսից արքայէն առ ձեր արքայն առաքիւր, թուղթ տուաք. մի՝ առ Թագաւորն, և միւս առ ձեզ. զի քրիստոնէից զաւակ է և հաւատարիմ քրիստոնէից, որոյ անուն Մուսաբէկ յորջորջի։ Բայց զայս գիտասջիք, սիրելիք. զի դեսպանին այսպէս եմք ապսպարեալ, թէ յորժամ գայցէ այդր, յինքենէ թուղթ առաքեսցէ յառաջագոյն առ ձեզ. զի դուք եկեալ առջիք ի նմանէ զնամակն ձեր՝ որ ի մէնջ է տուեալ. զի այսորիկ թղթոյս դիտաւորութիւն ունի այն թուղթն. թէպէտ սակաւուք զանազանին ըստ բառին չարադրութեան։ Եւ դուք պատրաստ կացջիք, որ զկնի առնլոյ զձեր նամակն՝ ընդ դեսպանին ի միասին մատուցանիցէք զթուղթ թագաւորին առ Թագաւորն։ Եւ դարձեալ, յորժամ զաւեր տեղւոյս լսէք, մի՛ այժմ եւս այնպէս կարծէք, այլ ողորմութեամբ Տեառն և աղօթիւք ձեր՝ քան զառաջինն եւս պայծառագոյն է բիւրապատիկ, և է լուցեալ պաշտօնէիւք Քրիստոսի, որք զցայգ և զցերեկ հանապազամատոյց աղօթիւք և հաշտարար պատարագաւք՝ զձեզ ունին ի մտի, և յաղագս ձերոյ կարծրագոյն վշտացն՝ աղաղակեն առ Բարձրեալն։ Որ և կողկողագին պաղատանաք խնդրեմք յամենազօր Տեառնէն՝ հանդերձ վերոյ գրեցելովքս, բարեխօս ունելով զյոքնաչարչար նահատակն Քրիստոսի զՍուրբն Գրիգորիոս. զի ամենակարող զօրութեամբն և ամենառատ զթութեամբն՝ ազատեսցէ զձեզ յայսմ դառնագոյն վշտաց. և փոխանակ այդմ նեղութեան՝ մխիթարեսցէ զձեզ Հոգւովն Սրբով, աստ և ի հանդերձեալն. և ինքն աւրհնեալ եղիցի յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԵՍ ՓԻԼԻՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՄՈՎ ՁԵՌՄՍ [1] ԳՐԵՑԻ։

1. Այսպէս է ի բնագրին։